«Չիք, չիք», «Աղամ, աղամ»

Ավագ շաբաթվա չորեքշաբթի օրվա՝ «Չիք, չիք», «Աղամ, աղամ» ծիսական գործողություն - խաղ
Ավագ շաբաթվա չորեքշաբթի հիմնովին մաքրել են տները, ամեն վատ, չար, պիղծ, հիվանդություն, կեղտ «չիք են արել»: Շուշեցի աղջիկները այդ օրը խաշխաշ հարելու քարը գետնին են քսել ու ասել.
Չիք, չիք, մուկը չիք,
Չիք, չիք, լուն չիք,
Չիք, չիք, կարիճը չիք,
Չիք, չիք, չարակամը չիք,
Չիք, չիք, հիվանդությունը չիք,
Չիք, չիք, օձը չիք...

Զանգեզուրում չիքը հարց ու պատասխանի ձևով էր արվում: Նախ՝ ամբողջ տունը դատարկել են, ապա կանանցից մեկը, քարը ձեռքն առած, բարձրացել է կտուրն ու երդիկի մոտ կանգնել, իսկ մյուսը՝ տան ներսում՝ երդիկի տակ: Տանիքին կանգնածը քարը տանում էր բերում երդիկի շուրջն ու հարցնում.
- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:
- Մուկն աղա:
- Աղամ, աղամ...ի՞նչն աղամ:
- Քունջ ու պուջախի տակերն աղա...

Մարդիկ հմայական արարողությամբ ձգտել են ոչնչացնել չարը, անցանկալին:
Նախակրթարանում 5 տարեկանների հետ «Չիք, չիք», «Աղամ, աղամ» խաղը սաների հետ խաղալիս հարցն այնպես պետք է ձևակերպել, որ նրանց համար հասկանալի լինի և պատասխանը լինի չթելադրված: Նախ, բացատրել խաղի իմաստը, ընդհանուր հարցեր տալ՝ ի՞նչն են ուզում, որ չլինի, ի՞նչն է նրանց խանգարում խաղալիս, դրսում, տանը, խմբում: Ընդհանրապես, այդ տարիքի երեխան ազատ է իրեն ծանոթ, տվյալ դեպքում՝ դաստիարակի ներկայությամբ: Այս խաղը կարելի է խաղալ ոչ միայն Ավագ

շաբաթվա չորեքշաբթի, այլև ցանկացած պահի: Ի դեպ, երբ խաղում են, դիտողության փոխարեն «չիք» են անում ու «աղում» ընթացքում իրար խանգարող, աղմկող սաների աղմուկը, շշմածությունը, լացը, անկարգությունը և այլն: Եվ ստացվում է խաղ՝ խաղի մեջ: Այսպես, ծիսական խաղը դառնում է հետաքրքիր, մտնում կյանք և դառնում ամենօրյա խաղ: